ընտրեցի ցամաքի ճանապարհը։ Ժամադրեալ ա-
տենին մեկնեցաւ ընթացքը։ Պայծառ և գեղեցիկ օր
մի էր, երթալով կը մօտենայի Նպատակիս, երկու
ժամէն պիտի լինէի հայանուն քաղաքին մէջ, և
պիտի տեսնէի, երբեմն մեզ նման Անեցի և ապա
Տաւրիացի, իսկ այժմ Նախիջևանցի համազգի և
համիրակ եղբարքը։

Թէպէտ և երկար չէր ճանապարհը, սակայն և
այնպէս կառքին պատուհանէն դէպ 'ի շրջակայից
վրայ նայելով, կ'ուզէի գաղափար ստանալ, այդ
Եկատերինեսլաւ գաւառին քաղաքերութեան և այլ
հանգամանաց վրայ։ Կը տեսնէի յաջմէ Դոն գետն՝
հեղած զեղած, անկանոն ընթացքով, տեղ տեղ
ջրերը մինչև հորիզոնին կը հասնէին. որոց միջէն
տխրատեսիլ կորացեալ ուռիք, արմատներն և ճիւ-
ղերուն կէսը ջրոց մէջ, իսկ միւս կէսն՝ օդոյն մէջ
երերագին, լալական և տրտմալի տեսիլ մի կ'ընծ-
այէին. ուռենեացս նման աւաղելի դրից մէջ էին
ցիր ու ցան ձկնորսաց հիւղերը, անկարգ և անկա-
նոն ձևով կը տեսնէի հեռուն՝ Դոնեան Խազախաց
գիւղերը։ Ի ձախմէ դաշտ էր և անապատ. մշա-
կութիւնը սակաւ. անտառ կամ պարտէզ քիչ ան-
գամ կը հանդիպէին աչացս։ Ի՞նչ զգալի հակա-
պատկեր անցեալ տարուան ճանապարհորդու-
թեանս և այս տարուանին մէջ. հոն Փոտոլեան և
Քիևի գաւառները և առ հասարակ Ուքրայիա,
թէպէտ և աշնանային տարազի մէջ, այլ ամե-
նուրեք կեանք և մշակութիւն կը տեսնէի. դաշտք առ-
հասարակ արօրադիր՝ մշակուած, ամեն կողմ պըտ-
ղատու պարտէզներ, կանոնաւորեալ անտառներ.
մինչդեռ հոս ամայի և խոպան։ Սակայն հոս ելք
ճանապարհին՝ հայ ուղևորի համար լի մխիթարու-